


ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Երևան քաղաքում դիտվում է մեկ և երկու տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Երևան քաղաքում, %


Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Երևան քաղաքում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,7%-ով և կազմել է 85,1%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 1,4%-ով՝ կազմելով 86,8%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,4%-ով՝ կազմելով 92,6%: 2019 թվականին Երևանի քաղաքապետարանի ենթակայության բուժկանխարգելիչ կազմակերպություններում 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել Նաիրի ԲԿ» ՓԲԸ-ում (62,5%), «Բժշկուհի Բադանյան» ՍՊԸ-ում (62,5%), «Թիվ 2-րդ բուժմիավորում» ՓԲԸ-ում (70,7%), «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (74,7%), «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (74,7%), «Արշակունյաց պոլիկլինիկա»

ՓԲԸ-ում (76,9%), «Սարի Թաղ պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (77,6%), «Նոր-Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (79,2%), «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (82,1%), «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ում (82,3%):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո Երևան քաղաքում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,6%-ով և կազմել 85,1%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,6%-ով և կազմել 86,8%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ ք.Երևանում՝ 6,9%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր՝ 2019թ. ք.Երևանում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի